



ԳԱՆՏԱՐԱՅՈՑ ԹԵՄ DIOCÈSE ARMÉNIEN DU CANADA

# ԿԱՆՈՒՄ

ՍԲ. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱԲՈՐԻՉ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍ  
ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԹԵՐԹԻԿ




**GANTEGH** BULLETIN DU DIMANCHE DE LA CATHÉDRALE  
ARMÉNIENNE ST. GRÉGOIRE L'ILLUMINEUR DE MOTRÉAL

ՄԱՅՐ ՏԱՃԱՐ

ԿԻՐԱԿԻ, 26 ՅՈՒՆՆԱՍԻ 2020

147

DIMANCHE, 26 Janvier 2020



**Բ Կիրակի Ձկնի Ս. Ծննդեան**  
**2EME DIMANCHE APRES NOEL**

615 Stuart Avenue, Outremont Quebec, Canada H2V 3H2  
Website: [www.saintgregory.ca](http://www.saintgregory.ca) / E.mail: [saintgregorychurch@gmail.com](mailto:saintgregorychurch@gmail.com)  
Facebook: Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal

# Աստուածաշունչի Ընթերցումներ

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԿՈՂՄԷ ՏԻՄՈԹԷՈՍԻ

ԳՐՈՒԱԾ ԱՌԱՋԻՆ ՆԱՄԱԿԷՆ (4.12-5.10)

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԷՆ

ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆԷՍԻ (3.12-21)

## **Les lectures de la Bible d'aujourd'hui**

1 TIMOTHÉE 4.12-5.10

JEAN 3.12-21

Պատարագիչ եւ քարոզիչ՝  
ԱՐԺ. Տ. ԴԱԻԻԹ ՔՂՆՅ. ՄԱՐԳԱՐԵԱՆ  
Հոգեւոր Հովիւ

Célébrant:

RÉV. PÈRE DAVID MARGARYAN

Prêtre Paroissial

Առաւօտեան Ժամերգութիւն - ժամը 9:30-ին

Office Matines à 9h30

Ս. Պատարագ ժամը - 10:30-ին

La Sainte Messe à 10h30

Հոգեհանգիստ ժամը - 12:30-ին

Requiem à 12h30

DIACRES – ACOLYTES

*Chef de chœur: M. Sarkis Barsemian*

*Organiste: Mme Houry Bedrossian*

# ԿԻՐԱԿՆՈՐԵԱՅ ԸՆԹԵՐՅՈՒՄՆԵՐ

LES LECTURES  
DE DIMANCHE



THE SUNDAY  
READINGS

## ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԿՈՂՄԷ

### ՏԻՄՈԹԷՈՍԻ ԳՐՈՒՄԾ ԱՌԱՋԻՆ ՆԱՄԱԿԷՆ 4.12-5.10

12 Ոչ մեկը թող արհամարհե քու երիտասարդութիւնդ, հապա տիպար եղիր հաւատացեալներուն՝ խօսքով, վարքով, սիրով, հաւատքով ու մաքրակեցութեամբ:

13 Մինչեւ որ գամ՝ ուշադիր եղիր կարդալու, յորդորելու, սորվեցնելու:

14 Անհոգ մի՛ ըլլար քու մէջդ եղած շնորհին հանդէպ, որ մարգարեութեամբ տրուեցաւ քեզի՝ երեցներուն ձեռնադրութեամբ: 15 Խոկման այդ բաներուն մասին եւ զբաղէ՛ ատուցմով, որպէսզի քու յառաջդիմութիւնդ երեւնայ ամենուն: 16 Ուշադիր եղիր դուն քեզի ու վարդապետութեան, եւ մի՛շտ յարատեւէ ատուց մէջ. քանի որ այդպէս ընելով՝ պիտի փրկես թէ՛ քեզ, թէ՛ քեզ խողները:

1 Մի՛սաստեր տարեցը, հապա յորդորէ՛ զայն՝ հօր մը պէս. երիտասարդները՝ եղբայրներու պէս, 2 տարեց կիները՝ մայրերու պէս, դեռահասակները՝ քոյրերու պէս, բոլորովին մաքրակեցութեամբ:

3 Պատուէ՛ այն այրիները՝ որ ի՛րապէս այրի են: 4 Բայց եթէ այրի մը ունի զաւակներ կամ թոռներ, անոնք թող սորվին նախ իրենց տան մէջ բարեպաշտութիւն ցոյց տալ, ու փոխարէնը հատուցանել իրենց ծնողներուն. որովհետեւ այդ է բարին եւ ընդունելին Աստուծոյ առջեւ: 5 Իսկ ան որ ի՛րապէս այրի է ու մի՛նակ մնացած, կը յուսայ Աստուծոյ, եւ գիշեր-ցերեկ կը յարատեւէ աղերսանքի ու աղօթքի մէջ. 6 մինչդեռ փափկասեր այրին մեռած է, թէպէտ կ'ապրի: 7 Պատուիրէ՛ այս բաները, որպէսզի անարատ ըլլան: 8 Բայց եթէ մեկը չի հոգար իրենները ու մանաւանդ իր ընտանիքը, ան ուրացած է հաւատքը, եւ աւելի գէշ է՝ քան անհաւատ մը:

9 Իբր այրի թող դասուի ան՝ որ վաթսուն տարեկանէն կրտսեր չէ, մէկ մարդու կին եղած է, 10 ու բարի գործերով վկայուած. եթէ զաւակներ մեծցուցած է, հիւրեր ընդունած, սուրբերուն ոտքերը լուացած, տառապեալներուն նպաստած, ամէն բարի գործի հետամուտ եղած:

### ԱԻԵՏԱՐԱՆ ԸՍՏ ԶՈՎՀԱՆՆԷՄԻ 3.13-21

13 Ո՛չ մէկը երկինք բարձրացաւ, բացի անկէ՝ որ երկինքէն իջաւ, մարդու Որդին՝ որ երկինքն է:

14 Եւ ինչպէս Մովսէս բարձրացուց օձը անապատին մէջ, այնպէս պէտք է որ բարձրանայ մարդու Որդին. 15 որպէսզի ո՛վ որ հաւատայ անոր՝ չկորսուի, հապա ունենայ յաւիտենական կեանքը:

16 Որովհետեւ Աստուած ա՛յնպէս սիրեց աշխարհը, որ մինչեւ անգամ տուաւ իր միածին Որդին, որպէսզի ո՛վ որ հաւատայ անոր՝ չկորսուի, հապա ունենայ յաւիտենական կեանքը:

17 Զանի որ Աստուած աշխարհ զրկեց իր Որդին՝ ո՛չ թէ աշխարհը դատապարտելու, հապա՝ որպէսզի աշխարհը փրկուի անով: 18 Ա՛ն որ կը հաւատայ անոր՝ չի դատապարտուիր, իսկ ա՛ն որ չի հաւատար՝ անիկա արդէն դատապարտուած է, որովհետեւ չհաւատաց Աստուծոյ միածին Որդիին անունին:

19 Սա՛ր է դատապարտութիւնը, որ լոյսը աշխարհ եկաւ, բայց մարդիկ սիրեցին խաւարը՝ փոխանակ լոյսին, քանի որ իրենց գործերը չար էին: 20 Որովհետեւ ո՛վ որ չարիք կը գործէ, անիկա կ'ատէ լոյսը եւ չի գար լոյսին քով, որպէսզի չկշտամբուի իր գործերը: 21 Բայց ա՛ն որ կը կիրարկէ ճշմարտութիւնը՝ կու գայ լոյսին քով, որպէսզի իր գործերը յայտնաբերուին թէ գործ-ուեցան Աստուծմով:»

### 1 Timothée 4.12-5.10

12Que personne ne méprise ta jeunesse; mais sois le modèle des fidèles en paroles, en conduite, en charité, en esprit, en foi, en pureté. 13Sois attentif à la lecture, à l'exhortation, et à l'instruction, jusqu'à ce que je vienne. 14Ne néglige point le don qui est en toi, et qui t'a été conféré suivant la prophétie, par l'imposition des mains de la compagnie des Anciens. 15Pratique ces choses, et y sois attentif, afin qu'il soit connu à tous que tu profites. 16Prends garde à toi, et à la doctrine, persévère en ces choses, car en faisant cela tu te sauveras, et ceux qui t'écoutent.

1Ne reprends pas rudement l'homme âgé, mais exhorte-le comme un père; les jeunes gens comme des frères; 2Les femmes âgées, comme des mères; les jeunes, comme des cœurs, en toute pureté. 3Honore les veuves qui sont vraiment veuves. 4Mais si quelque veuve a des enfants, ou des enfants de ses enfants, qu'ils apprennent premièrement à montrer leur

piété envers leur propre maison, et à rendre la pareille à ceux dont ils sont descendus : car cela est bon et agréable devant Dieu. 5Or celle qui est vraiment veuve, et qui est laissée seule, espère en Dieu, et persévère en prières et en oraisons nuit et jour. 6Mais celle qui vit dans les délices, est morte en vivant. 7Avertis-les donc de ces choses, afin qu'elles soient irrépréhensibles. 8Que si quelqu'un n'a pas soin des siens, et principalement de ceux de sa famille, il a renié la foi, et il est pire qu'un infidèle.

9Que la veuve soit enregistrée n'ayant pas moins de soixante ans, et n'ayant eu qu'un seul mari; 10Ayant le témoignage d'avoir fait de bonnes œuvres, [comme] d'avoir nourri ses propres enfants, d'avoir logé les étrangers, d'avoir lavé les pieds des Saints, d'avoir secouru les affligés, et de s'être [ainsi] constamment appliquée à toutes sortes de bonnes œuvres.

### **Jean 3.12-21**

13Car personne n'est monté au ciel, sinon celui qui est descendu du ciel, [savoir] le Fils de l'homme qui est au ciel. 14Or comme Moïse éleva le serpent au désert, ainsi il faut que le Fils de l'homme soit élevé; 15Afin que quiconque croit en lui ne périsse point, mais qu'il ait la vie éternelle, 16Car Dieu a tant aimé le monde, qu'il a donné son Fils unique, afin que quiconque croit en lui ne périsse point, mais qu'il ait la vie éternelle. 17Car Dieu n'a point envoyé son Fils au monde pour condamner le monde, mais afin que le monde soit sauvé par lui. 18Celui qui croit en lui ne sera point condamné ; mais celui qui ne croit point est déjà condamné ; parce qu'il n'a point crut au Nom du Fils unique de Dieu. 19Or c'est ici le sujet de la condamnation, que la lumière est venue au monde, et que les hommes ont mieux aimé les ténèbres que la lumière, parce que leurs œuvres étaient mauvaises. 20Car quiconque s'adonne à des choses mauvaises, hait la lumière, et ne vient point à la lumière, de peur que ses œuvres ne soient censurées. 21Mais celui qui s'adonne à la vérité, vient à la lumière, afin que ses œuvres soient manifestées, parce qu'elles sont faites selon Dieu.



## Հոգեւոր Հովիւի Պատգամը

### **Յանուն Հօր Եւ Որդւոյ Եւ Հօգւոյն Սրբոյ**

Սիրելի քրիստոսաւեր ժողովուրդ,

Օրուան աստուածաշնչեան ընթերցուածին մէջ մեզի համար կը բացայայտուին Աւետարանական գլխաւոր ոսկի տողերը, որոնք պետք է դրոշմուած ըլլան իւրաքանչիւր քրիստոնեայի սիրտին մէջ ու միշտ հնչեն միտքին մէջ՝ ի մխիթարութիւն եւ ուրախութիւն՝ դժուարին պահերուն: Պարզ, հասկնալի եւ միեւնոյն ժամանակ մինչեւ հոգիի խորքը ցնցող իրականութիւն. «Քանի որ Աստուած այնքան սիրեց աշխարհը, որ մինչեւ իսկ իր միածին Որդին տուաւ, որպէսզի, ան որ անոր կը հաւատայ, չկորսուի, այլ ընդունի յաւիտեանական կեանքը» (Յովհ. 3:16):

Եթէ փորձենք քրիստոնեութեան ամբողջ գաղափարը ամփոփել մէկ տողի մէջ միայն, ապա ան միանշանակ (Ա Յովհ. 4:8-ը) կ'ըլլայ. «Աստուած սեր է»: Արարիչին անսահման սերը՝ իր արարածներուն նկատմամբ, արտայայտուեցաւ աշխարհին ստեղծումէն ի վեր: Անոր կենարար սիրոյ հետեւանքը եղաւ երկրի ու մարդու արարչագործութիւնը: Մենք դարձանք մեր Երկնային Հօր անսահման սիրոյ պտուղները: Սիրելիներ, նայեցէք ձեր շուրջը: Մեր Երկիր մուրակի գարմանահրաշ բնութիւնը, կենարար արեւն ու անձրեւը, ամէն բացուող բողբոջն ու ծաղիկը, ամէն բան կը վկայեն Արարիչին սիրոյ մասին: Ամէն բան սկիզբէն ստեղծուել էր Աստուծոյ սիրասուն գաւակներուն բարօրութեան ու երջանկութեան համար եւ մարդն ալ կը վայելէր Աստուածային սիրոյ հրաշալի դրսեւորումները ամբողջութեամբ, մինչեւ որ մեղք գործեց եւ հեռացաւ Կենարար Լոյսի Աղբիւրէն:



Ի՞նչ կը կարծեք սիրելի քոյրեր եւ եղբայրներ, Աստուծոյ սերը մարեցա՛ւ մարդու անհնազանդութենէն յետոյ: Ի հարկէ ո՛չ: Աստուած շարունակեց սիրել մեզ, մեղաւորներս, այնպէս, որ նոյնիսկ Իր Միածին Որդին զոհաբերեց՝ մեր փրկութեան համար: Պօղոս առաքեալն ալ կը փաստէ այդ, ըսելով. «Աստուած իր սերը յայտնեց մեզի անով, որ, թէեւ մեղաւոր էինք, Զրիստոս մեզի համար մեռաւ» (Ռոմ. 5:8): Աստուածային սերն ու կարեկցութիւնը, որոնք դրսեւորուեցան Յիսուս Զրիստոսի երկրային կեանքին միջոցով, Հօր սիրտէն կը բխէին եւ կը հոսէին դէպի մարդկային որդիները: Չէ՞ որ մեր Փրկիչը՝ Աստուած էր, ինչպէս կը վկայէ Պօղոս առաքեալը Տիմոթէոսին ուղղուած իր առաջին նամակին մէջ (3:16): Յիսուս Զրիստոս, Կենդանի Աստուծոյ Միածին Որդին, ձգեց երկինքը եւ երկիր իջաւ, մարդացաւ, ուսուցանեց, հիւանդները բժշկեց, անօթիները կերակրեց, անարգուեցաւ ու խաչին վրայ տանջալից մահուան ենթարկուեցաւ, որովհետեւ կը սիրէր: Կը սիրէր հարազատներն ու մերձաւորները, մօտիկներն ու հեռաւորները, մեզմէ իւրաքանչիւրը առանձին-առանձին, բոլոր մեղաւորները եւ նոյնիսկ իրեն մահուան մատնածները, քանի որ խաչին վրայ գամուած՝ ինդրեց Հօրմէն. «Հայր, ներէ՛ իրենց, որովհետեւ չեն գիտեր, թէ ի՞նչ կ'ընեն» (Ղուկ. 23:34):

Ան աշխարհ եկաւ, որպէսզի, մեղքի հետեւանքով, Սիրող Ծնողի ու զաւակի միջեւ յառաջացած պատնէշը կործանուի եւ Իր սիրելի արարածներուն երկնային ուրախութեան ու յաւիտենական կեանքի յոյս պարգեւէ: Յաւիտենական կեանքին, ուր երջանկութեան ու երանութեան աղբիւրը Ինքը՝ Աստուած է: Այն Արարիչ Աստուածը, որ սիրեց մեզ՝ նախքան մեր լոյս աշխարհ գալը: Այն Աստուածը, որ կը շարունակէ մեզ սիրել, հակառակ որ, մենք բազմաթիւ մեղքեր կը գործենք: Ան կը սիրէ մեզ անկախ անկէ, թէ մենք Չինք կը սիրենք թէ ո՛չ: Մեր Հայրը կը սիրէ ու կը շարունակէ հաւատալ մեզմէ իւրաքանչիւրին, եթէ նոյնիսկ մենք հրաժարինք Անոր հանդէպ մեր ունեցած հաւատքէն: Երկինքին ու երկրին երեսին չկայ այնպիսի բան մը, որ յաղթէ Անոր սիրոյն, որովհետեւ Աստուածային Սերը կը յաղթահարէ ամէն չարիք ու կը միաւորէ մեզ Եկեղեցւոյ միասնական մարմինին մէջ, որուն զուկար Ինքը՝ Աստուծոյ Որդին է: «Մի՞թէ կինը կը մոռնայ իր մանուկը կամ չի գթար իր որովայնի ծնունդներուն, եւ եթէ կինը մոռնալու ալ ըլլայ այդ, ես, սակայն, քեզ չեմ մոռնար», - կ'ըսէ Տէրը» (Եսայի 49:15): Ահա Աստուծոյ Որդին՝ երկիր գալով, մարդացաւ, որպէսզի մարդը կարենայ կրկին Աստուծոյ որդի դառնալ: Իր

երկրային մարմնաւորման մէջ՝ Աստուած Ինքզինք կը նուիրէ աշխարհին: Այսպէս Է Բարձրագոյն Սիրոյ դրսեւորումը, որ իրենը չի փնտռեր, այլ ինքզինք կը գոհէ ուրիշին համար (Ա Կորնթ. 13:5): Հայր Աստուած երկիր ուղարկեց Որդի Աստուծոյ, որպէսզի աշխարհը ճանչնայ, թէ ինչն է սերը եւ սորվի սիրել: Իսկ առանց Աստուծոյ Սէրը ունենալու մեր սիրտերուն մէջ, մենք հոգեւոր մահ կ'ապրինք եւ բնականաբար զուրկ կ'ըլլանք այն աստուածային խաղաղութենէն, ուրախութենէն ու սփոփանքէն, որ միմիայն Կեանքի Աղբիւրը կը պարգեւէ: Առանց Անոր մենք կը նմանինք անպէտք ու ժանգոտած գործիքի մը, որուն միայն հոգատար Վարպետի մատներուն հպումը կրնայ վերստին կեանքի կոչել: Եւ իսկապէս, մարդը առանց Աստուծոյ, անընդհատ փնտռուքներու մէջ է: Ան երջանկութիւն կը փնտռէ ամէն տեղ, սակայն բնականաբար չի գտներ: Եւ այդ փնտռուքներն ալ կործանարար կ'ըլլան անոր հոգիին եւ մարմինին համար, քանի որ յաճախ կապուած կ'ըլլան մեղքի հետ... Իսկ երջանկութեան բանալին միմիայն Աստուծոյ մէջ է: Փնտռեցէք Աստուծո՛յ: Եւ կը գտնէք Անոր անսահման սէրը, որ ձեզի երջանկութիւն կը պարգեւէ:

Երանելի Յովհաննէս առաքեալը, տեսնելով հանդերձ մեղքերու մէջ կործանուող մարդկութիւնը եւ անոր հանդէպ Արարիչին տածած սիրոյ բարձրութիւնն ու խորութիւնը՝ այնպիսի հիացմունքով ու երանութեամբ լեցուեցաւ, որ խօսքեր չգտնելով, որպէսզի նկարագրէ այդ սիրոյ ամբողջ մեծութիւնը՝ մարդկութեան ուշադրութիւնը հրաւիրեց, ըսելով. «Տեսէ՛ք ինչպիսի սեր շնորհեց մեզի Հայրը, որպէսզի մենք կոչուինք Աստուծոյ որդիներ» (Ա Յովհ. 3:1): Ահա՛, թէ ինչպիսի մեծագոյն շնորհ կ'ընէ մեզի Երկինքի եւ Երկրի Արարիչը: Մեր Փրկիչին, Յիսուս Քրիստոսին կրելով մեր սիրտերուն մէջ՝ մենք կ'արժանանանք Աստուծոյ զաւակներ կոչուելու մեծագոյն պատիւին:

Ուրեմն, սիրելիներ, թոյլ տանք, որ մեր Փրկիչը ծնի մեր սիրտերուն մէջ, եւ ամբողջ մեր սերն ու ջերմութիւնը փոխադարձաբար նուիրենք մեր Տէր Աստուծոյ՝ հետեւաբար նաեւ մեր մերձաւորներուն: Աստուածային Սէրը կը միաւորէ մեզ արտասովոր կերպով: Կը միաւորէ մեզ սիրոյ կապանքներով եւ սքանչելի կերպով կը վերափոխէ իւրաքանչիւրիս կեանքը:

Ուրեմն, սիրելի՛ հաւատացեալներ, եկէ՛ք մեր երախտագիտութիւնը յայտնենք Աստուծոյ՝ մեզ սիրելուն համար: Երախտապարտ ըլլանք Անոր, որ այնքան սիրեց մեզ եւ այս աշխարհը, որ Իր Միածին Որդին տուաւ, որպէսզի մեզմէ ամէն մէկը Անոր միջոցով փրկութիւն ու յաւիտենական կեանք



ունենայ: Աղօթենք Աստուծոյ, որպէսզի Անոր Կենարար Սէրը երբեք չի պակսի մեր սիրտերէն, միշտ լուսաւորէ ու վերափոխէ մեր կեանքերն ու մեզ շրջապատող աշխարհը: Ամէն:

Օրհնութեամբ՝

Տ. Դաւիթ քահանայ Սարգսրեան

Հոգեւոր հովիւ

### **Résumé du Sermon**

Dans les Saintes Écritures d'aujourd'hui l'Évangile de St. Jean nous révèle la vérité fondamentale de l'Amour de Dieu.

Dieu a tant aimé le monde qu'Il lui a donné son fils : ainsi tout homme qui croit en Lui ne périra pas, mais obtiendra la vie éternelle. La raison de l'envoi de son fils est pour notre salut.

Mais Il est aussi Sauveur des pécheurs qui sont prêts à demander pardon. Le vrai pardon est l'effacement du mal qui nous sauve car il est acte d'amour. Dieu répond au mal par le bien et au pèche par la grâce.

Pour Dieu le monde est objet du Salut pour nous tous, même celui qui est

dans les ténèbres n'est pas hors de portée de l'amour de Dieu.

Cet amour pour nous est révèlé par la venue de Jésus parmi nous, sa passion, sa

mort et sa résurrection et nous invite à rendre l'amour par l'amour.

La clef du bonheur est dans Dieu et pour trouver le bonheur éternel il nous faut chercher Dieu.

Nous sommes tous des enfants de Dieu dès la naissance mais nous le devenons ensuite en accueillant Jésus en nous. Et c'est cela l'amour de Dieu qui est un don gracieux.

En Foi et en Prière

Père David Margaryan

Prêtre paroiss

## ԿԱՐԵՒՈՐ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ



Արդեօք Գիտի՞ք թե՛.-

- **Ինչպես հացն ու զինին Քրիստոսի մարմինն ու արիւնը կը դառնան:**

Ս. Պատարագի ժամանակ հոգեւորականին աղօթքներուն եւ Ս. Հոգիին ներգործութեամբ սովորական հացն ու զինին անճառելի, անհասանելի, անխմանալի կերպով կը դառնան Քրիստոսի իրական մարմինն ու արիւնը: Մարդկային միտքը ընդունակ չէ մինչեւ վերջ բացատրելու կամ հասկնալու այդ **«ինչպէս»**-ը, բայց մենք առանց երկմտելու կը հաւատանք, որ Ս. Սեղանի վրայ Ս. Երրորդութեան երրորդ Անձին՝ Ս. Հոգիին իջմամբ սրբագործուած հացն ու զինին կը փոխակերպուին Տիրոջ Մարմնին եւ Արեան: Մեր Եկեղեցւոյ հայրերը այս իրողութիւնը բացատրելու համար կ'օգտագործեն **«փոխարկուիլ», «փոխուիլ», «հոգիանալ»** եւ **«դառնալ»** եզրերը:

- **Ուրեմն, Ս. Սեղանի վրայ սրբագործուած հացը եւ զինին սովորական հաց եւ զինի չե՞ն:**

Ո՛չ: Վերը յիշեցինք, որ, որ Ս. Պատարագի ընթացքին Ս. Հոգիին ներգործութեամբ եւ պատարագիչին աղօթքներով անոնք կը դառնան Տիրոջ ճշմարիտ եւ իրական Մարմինն ու Արիւնը: Առաքելահիմն մեր Եկեղեցւոյ աստուածաբանական մտածողութեան համաձայն՝ սրբագործուած հացին եւ զինիին մէջ Քրիստոս ներկայ է ոչ թէ խորհրդանշական կամ պատկերաւոր ձեւով, այլ՝ ճշմարտապէս եւ իրական: Ինչպէս Հնդկանրական, այնպէս ալ մեր Եկեղեցւոյ հայրերն ու վարդապետները իրենց գրուածքներուն մէջ կը շեշտեն այս կարեւոր հանգամանքը՝ մենք կը ճաշակենք ոչ թէ պարզ հաց եւ զինի, այլ միայն Քրիստոսին: Միայն այս գիտակցութեամբ եւ աներկբայ համոզումով պէտք է մօտենալ Ս. Հաղորդութեան: Եթէ մէկը թերահաւատ է կամ կասկածամիտ, ապա անոր համար անելի լաւ է Ս. Հաղորդութեան ընդհանրապէս չմօտենալ:

- **Ի՞նչն է Ս. Հաղորդութեան արդիւնքը մարդու կեանքին մէջ:**

Փրկիչին Մարմինը եւ Արիւնը ճաշակելով՝ քառութիւն եւ թողութիւն կը ստրուի մեր մեղքերուն, կը դառնանք Քրիստոսով նոր մարդ՝ լուսատրուած եւ զօրացած: Մեր այս երանելի վիճակը կը մղէ մեզ յաճախակի մերձենալ Տիրոջը, ճաշակել Անոր՝ համոզուելով անգամ մը եւս, թէ որքան քաղցր է Տէրը: Ս. Գրիգոր Տաթեւացին կ'ըսէ.

**«Այս խորհուրդին գործն է աւելցնել շնորհը եւ դեղ ըլլալ ամենօրեայ մեղքերուն»:**

Հաւատքով, երկիւղածութեամբ եւ սիրով մօտենալով Անոր՝ կրննաք զգալ նաեւ Ս. Հաղորդութեան հրաշագործող, այլակերպող զօրութիւնը մեր վրայ, ինչպէս Ս. Յովհան Մանդակունին կ'ըսէ. **«Անոնք որոնք հաւատքով եւ երկիւղածութեամբ կը մօտենան Քրիստոսին, կը լուսատրուին Ս. Հոգիով եւ առաքինի գործերով օրէ օր վեր կը բարձրանան»:**

# Holidays

Saturday, January 25, 2020

## Commemoration of Patriarchs St. Athanasius and St. Cyril of Alexandria



Patriarchs St. Athanasius and St. Cyril are among the most prominent figures of the Universal Church, who devoted their lives to the promulgation of the orthodoxy of Christianity, and the struggle against false conceptions and erroneous teachings.


St. Athanasius (295-373 A.D.) was born in Alexandria, to a Greek Christian family. He received his higher education in the famous Theological School of Alexandria. He was ordained to the diaconate by Patriarch Alexander of Alexandria, and participated in the Ecumenical Council of Nicea in 325, as the Patriarch's personal secretary. During the council he decisively defeated Arius and his followers who denied the Divine nature of Christ and purported that He was a created being. In his argument St. Athanasius stated the reality of Christ being God and explained the salvation in combining the human nature of Jesus with God, which is possible only through His incarnation. According to the formulation of St. Athanasius, salvation is nothing else but theosis – being adopted by God. Athanasius stated that God became incarnate, “so that sons of mortal men should become sons of God.”

In 328, St. Athanasius became Bishop of Alexandria. He continued to struggle against Arianism and forcefully defended the Nicene Orthodox teaching. Having been subjected to repeated persecutions, he spent 15 of his 47-year episcopal service in exile. His heroic efforts bore fruit, and eight years following his death his teachings were adopted by the Ecumenical Council of Constantinople, in 381. St. Athanasius made very significant contributions to the development of monastic life as well.

Patriarch St. Cyril of Alexandria is one of the brilliant representatives of the Alexandrian Theological School. He was born in 380, and was the nephew of Patriarch Theophilus, whom he succeeded in 412. He struggled against Nestorius, the Patriarch of Constantinople, for the preservation of orthodox teaching. It was for this purpose that Emperor Theodoros II convened the Third Ecumenical Council in Ephesus, in 431. During the Council, Nestorius and his teachings were criticized and condemned, and the formulation of “Theotokos” (Birthgiver to God) was adopted by the Church as it related to St. Mary. The famous formulation of St. Cyril: “The one incarnate nature of God the Word”, has become the cornerstone of the Armenian Church regarding the nature of Christ.

**Monday, January 27, 2020**

**Commemoration of Martyrs Sts. Eugenios, Makarios, Valerios, Canditos and Akyoughas**



The quick spreading of Christianity especially on the territory of the Roman Empire since the 3rd century started to worry the kings. Royal charters were issued ordering the Christians to adopt the heathen religion, otherwise they should be persecuted to death. During that period of persecutions any Christians preferred to die than to Betray Jesus Christ.

The Church always appreciated the torments of the people for the sake of Christ, their courage and strength of their faith. Among such people are the martyrs Eugenios and Makarios, martyred during the reign of the King Julianos the Betrayer. Martyrs Valerios, Canditos and Akyoughas have been martyred during the reign of the Kings Dioclethianus and Maximianus.

Commemorating the martyrs' memory, the Church teaches the faithful to remain loyal to Christ even under most severe circumstances.

**Երկուշաբթի, 27 Յունուար 2020**

**Ս. ԿԱՍԵՐ ԵՎԳԵՆԻՈՍԻ, ՄԱԿԱՐԻՈՍԻ, ՎԱՐԵՐԻՈՍԻ, ԿԱՆԴԻՏՈՍԻ ՈՒ ԱԿԻՂԱՍԻ ՅԻՇԱՏԱԿՈՒԹԵԱՆ ՕՐ**

Քրիստոնեութան արագ տարածումը յատկապես հռոմեական կայսրութան սահմաններուն մէջ, արդէն երկրորդ դարէն անհանգստացուցեր էր կայսրերուն: Հրապարակուեցան կայսրական հրովարտակներ, որոնցով կը հրահանգուէր կամ հեթանոսութեան դարձնել քրիստոնեաներուն կամ ալ հալածել միևնույն մահ: Հալածանքներու այդ ժամանակաշրջաններուն բազմաթիւ քրիստոնեաներ կը նախընտրէին մեռնիլ, քան ուրանալ Քրիստոսին: Եկեղեցին մեծապէս կը գնահատէ յանուն Քրիստոսի այդ մարդոց կրած չարչարանքները, անոնց համարձակութիւնն ու հաւատքը: Այդպիսի վկաներ են Յովհաննոս Ուրացոյ կայսրի օրերուն նահատակուած Եվգենիոսն ու Մակարիոսը, Դիոկղետիանոս եւ Մաքսիմիանոս կայսրերու օրերուն նահատակուած Վարդերիոսը, Կանդիտոսն ու Ակիղասը: Տօներ կարգելով ի յիշատակ այդ նահատակներուն, Եկեղեցին կ'ուսուցանէ

**ՏԱՐԵԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՆԴԱՄԱԿԱՆ ԺՈՂՈՎ**  
Կիրակի, 15 Մարտ 2020 Ս. Պատարագի աւարտին  
կ. Ե. Ժամը 2-ին

**ANNUAL GENERAL MEMBERSHIP ASSEMBLY**

**Sunday, March 15, 2020 at 2:00 pm**

**After the Holy Mass**



հաւատացեալներուն      հաւատարիմ      մնալ  
Քրիստոսին      նոյնիսկ      ամեն-աղօժարին  
պայմաններուն մէջ:

**ՇԱԲԹՈՒՄԱՆ ԱՂՕԹՔ**  
**ԱՂՕԹՔ ՍՈՒՐԲ ՀԱՂՈՐՂՈՒԹԻՒՆ**  
**ԱՌՆԵԼԷՆ ԱՌԱՋ**  
**(ՇԱՐՈՒՆԱԿԵԼԻ)**

Շնորհակալութիւն կը յայտնեմ,  
կը գովաբանեմ ու կը փառաբանեմ քեզ, ով Տէր՝  
մեր Աստուածը, որ զիս՝ անարժանս այսօր  
արժանացուցիր հաղորդակից դառնալու քու  
աստուածային եւ սոսկալի խորհուրդիդ,  
անարատ Մարմինիդ եւ թանկագին Արիւնիդ:  
Արդ, ասուք բարեխօս ունենալով կ'աղաչեմ,  
որ իմ ամբողջ կեանքիս ընթացքին, տնաբար  
զիս պահես քու սրբութեանդ մէջ,  
որպէսզի քու պարգեւներդ յիշեմ,  
ով բարեգութ, եւ քեզմով կեանք ունենամ:  
Դուն որ մեզի համար չարչարուեցար, մեռար  
եւ յարութիւն առիր, ով իմ Տէրս եւ Աստուածս,  
քու թանկագին Արիւնովդ կ'ըքե իմ անձս,  
որպէսզի խորտակիչը չմօտենայ ինծի:  
Ամենակարող, դուն՝ որ միակ անմեղն ես, քու  
Մարմնովդ եւ Արիւնովդ մաքրե զիս  
բոլոր մեռելական գործերէս:

**PRIÈRE AVANT LE RECEVOIR**  
**LA SAINTE COMMUNION**  
**(À suivre)**

Mon Seigneur et mon Dieu, je Te rends grâce,  
Je T'exalte et Te glorifie, car aujourd'hui,  
moi qui en étais indigne,  
Tu m'as rendu digne de prendre part  
au Mystère divin et redoutable  
de ton Corps immaculé et de Sang précieux.  
Ils intercèdent pour moi maintenant;  
Je T'en prie, garde-moi dans ta sainteté  
chaque jour et à chaque heure de ma vie,  
pour que, me rappelant ta bonté,  
je vive avec Toi, qui as souffert,  
qui es mort et ressuscité pour nous.  
Mon Seigneur et Mon Dieu,  
quand mon âme sera scellée de ton précieux Sang,  
éloigne de moi le Destructeur.  
Toi, le Tout-Puissant, le seul sans péché,  
par ton Saint Corps et ton Saint Sang,  
débarrasse-moi de mes actions inutiles.

## Շարքուայ խորհրդածութիւնը

- Խօսքի Աստուծոյ հետ ազատ սիրտով: Մի փորձեր ընտրել որոշակի արտայայտութիւններ կամ ստեղծել յատուկ զգացողութիւններ: Բայց ըսէ Անոր այն ամէնը, ինչ կայ քու սրտիդ մէջ, ամբողջ պարզութեամբ, ինչպէս ընկերը կը խօսի իր ընկերոջ հետ, եւ որպէս մարդ, որ կը բանայ իր սիրտը մէկ այլ սիրտի առջեւ, որուն սիրոյն եւ հոգատարութեան կը վստահի:

Շնորհք պատրիարք Գալուստեան

- Զու տեսիլներդ կը պարզուին միայն այն ժամանակ, երբ կը կարողանաս հայացք նետել քու սրտիդ: Ով որ դուրսը կը նայի՝ երազներ միայն կը տեսնէ, իսկ ով որ իր մէջը կը նայի՝ կ'արթննայ:

Գարլ Կուսլաւ Եունկի  
Յոգեբան-Փիլիսոփայ

- Մենք կը ձգտինք դէպի անցեալը՝ մեր ծնողներուն մօտ, դէպի առաջ՝ մեր երեխաներուն մօտ եւ դէպի ապագայ, որ երբեք մենք չենք տեսներ, բայց որուն մասին կ'ուզենք յաճախ հոգ տանիլ:

Գարլ Կուսլաւ Եունկի  
Յոգեբան-Փիլիսոփայ

## ՏՆՕՐՅՆԷԻ ԱՄԷՆԴՈՅԹՆ ՈՒ ՍՈՎՈՐՈՅԹԸ

Տնօրինէք փափաքող հաւատացեալները կրնան հեռաձայնել  
Տ. Դավիթ Զինյ. Սարգարեանին՝ (514) 448-2809  
կամ Եկեղեցւոյ գրասենեակ՝ (514) 279-3066

### The Tradition of Home Blessing

The home is blessed for dedication or rededication, a reminder that the home reflects the Kingdom of God. Traditional times of the year for Armenian homes to be blessed are Eastertide (the 50 days following Easter), Christmastide (until February 14, the Feast of the Presentation), and after having moved into a new home.

At a Home Blessing, every member of the family assembles with the priest to sanctify together three life-giving gifts: bread, water, and salt. It is a custom for the priest to bring with him a nushkhar as a symbol of the presence of God's blessing.

To request a Home Blessing,  
please contact with  
Fr. David Margaryan at (514) 448- 2809  
or church office at (514) 279-3066.

## ԱՌ Ի ԳԻՏՈՒԹԻՒՆ ՅՈԳԵՅԱՆԳՍՏԵԱՆ ՊԱՇՏՕՆԻ

Մեր սիրելի հաւատացեալներուն կը տեղեկացնենք, որ  
Յոգեհանգստեան Պաշտօն ինդրելու համար Եկեղեցի  
հեռաձայնել պահանջուած հոգեհանգիստի թուականէն մէկ  
շաբաթ առաջ

մինչեւ այդ շաբթուայ **Յինգշաբթի կ.ե. Ժամը 5-ը:**

Ե-Յասցեով (e-mail) ինդրուող հոգեհանգստեան պաշտօն կամ որեւէ այլ  
ինդրանք պէտք է **հաստատուիլ եւ վերստուգուիլ** քարտուղարութեան հետ  
**հեռաձայնելով Եկեղեցւոյ գրասենեակ՝ (514) 279-3066 թիւին:**

Շնորհակալութիւն  
Եկեղեցւոյ գրասենեակ

**ՀՈԳԵՀԱՆԳՍՏԵԱՆ ԿԱՐԳ**

**SERVICE POUR LE  
REPOS DE L'ÂME**



**SERVICE FOR THE  
REPOSE OF SOUL**

**ՀՈԳԵՀԱՆԳԻՍ  
ԿԻՐԱԿԻ, 26 ՅՈՒՆԻՈՒԱՐ 2020**



Տիկ. Սիրուհի Սիւմպիլեանի,  
Օրդ. Սիւզի Սիւմպիլեանի,  
Պրն. Սերժ Սիւմպիլեանի,  
Եւ Թոռներուն՝

Ուիլերմ եւ Քաթրին Սիւմպիլեաններու,  
Խնդրանքով հոգեհանգստեան պաշտօն պիտի  
կատարուի իրենց սիրեցեալ ամուսնոյն,  
հօր եւ մեծ հօր՝

**ԳԵՂԱՍ ՍԻՒՄՊԻԻԼԵԱՆԻ  
(KEGHAM SUMBULIAN)  
մահուան 40-ին առիթով**



Տիկ. Իլտա Ուղուրլուճանի եւ ընտանիքին,  
Տիկ. Հերմին Ուղուրլուճանի եւ ընտանիքին,  
Տիկ. Էլիզապէթ Ուղուրլուճանի եւ ընտանիքին,  
Եւ համայն Ուղուրլուճան եւ Օզթասճի  
ընտանիքներու,

խնդրանքով հոգեհանգստեան պաշտօն պիտի  
կատարուի իրենց սիրեցեալ մօր, մեծ մօր եւ  
հարազատին՝

**ՀԵՂՆԱ  
ՕԶԹԱՍՃԻ ՈՒՂՈՒՐԼՈՒՃԱՆԻ  
(HIGNA OZTASCI UGURLUCAN)  
Մահուան 40-ին առիթով**





Տիկ. Անի Արապեանի,  
Եւ համայն Արապեան ընտանիքին,  
խնդրանքով հոգեհանգստեան պաշտօն պիտի  
կատարուի իրենց սիրեցեալ ամուսնոյն,  
հօր եւ մեծ հօր՝

**ՍԱՐԳԻՍ ԱՐԱՊԵԱՆԻ**  
(SARKIS ARABIAN)

Մահուան առաջին տարելիցին առիթով



Տիկ. Մարի Աղազարեանի եւ ընտանիքին,  
Օրդ. Թագուհի Աղազարեանի,  
խնդրանքով հոգեհանգստեան պաշտօն պիտի  
կատարուի իրենց սիրեցեալ ամուսնոյն, հօր, մեծ հօր  
եւ եղբոր՝

**ԲԱՐԵՇՆՈՐՀ**  
**ՀԱՄԲԱՐՉՈՒՄ ՍՐԿ.**  
**ՍՂԱԶԱՐԵԱՆԻ**  
(DN. HAMPARTZOOM  
AGHAZARIAN)

Մահուան 6-րդ տարելիցին առիթով



Պրն. Զաւէն Գազանճեանի եւ զաւակներուն՝  
Արմանտի եւ Սարինայի,  
Տիկ. Անի Սուքիասեանի եւ զաւակներուն՝  
Նորայի, Սիլվայի եւ Կերիի,  
Խնդրանքով հոգեհանգստեան պաշտօն պիտի  
կատարուի իրենց սիրեցեալ կնոջ, մօր, զաւկին, քրոջ  
եւ հարազատին՝

**ՍԵՂԱ ՍՈՒՔԻԱՍԵԱՆԻ**  
(SETA SOUKIASSIAN)

մահուան 3-րդ տարելիցին առիթով

**ինչպէս նաեւ՝**

իրենց սիրեցեալ ամուսնոյն, հօր եւ մեծ հօր՝

**ՆՈՒՊԱՐ ՍՈՒՔԻԱՍԵԱՆԻ**  
(NOUBAR SOUKIASSIAN)

մահուան 26-րդ տարելիցին առիթով



Տիար Գարլո Կիրիւնեանի  
եւ Տօրթ. Վիլմա Տերպէեանի եւ զաւակներուն,  
Տ. եւ Տիկ. Ռուբէն եւ Մելինէ Արսէվերի եւ  
զաւակներուն,  
Խնդրանքով հոգեհանգստեան պաշտօն պիտի  
կատարուի իրենց սիրեցեալ ծնողաց եւ մեծ ծնողաց՝

**ԳԱՐԵԳԻՆ ԵՒ ՌՕԶԱ**

**ՏԷՐՊԷՔԵԱՆՆԵՐՈՒ**

**(KAREKIN & ROSA DERBEKYAN)**

Ինչպէս նաեւ՝

**ԹԱՍԼԵԱՆ ԵՒ ՏԷՐՊԷՔԵԱՆ**

**(TATLIAN & DERBEKYAN)**

Գերդաստաններու համայն ննջեցելոց  
հոգիներուն ի հանգիստ



Տ. եւ Տիկ. Ռուբէն եւ Մելինէ Արսէվերի,  
Տ. եւ Տիկ. Պետրոս-Արի եւ Թինա Արսէվերի եւ  
զաւակներուն,

Խնդրանքով հոգեհանգստեան պաշտօն պիտի  
կատարուի իրենց սիրեցեալ ծնողաց եւ մեծ ծնողաց՝  
**ԳԱՌՆԻԿ ԵՒ ՏԻԳՐԱՆՈՒՀԻ ՏԷՐՊԷՔԵԱՆՆԵՐՈՒ**

**(KARNIG & DIKRANUHI DERBEKYAN)**

Ինչպէս նաեւ՝

**ՏԷՐ ՊՕՂՈՍԵԱՆ ԵՒ ՏԷՐՊԷՔԵԱՆ**

**(DER BOGHOSSIAN & DERBEKYAN)**

Գերդաստաններու համայն ննջեցելոց  
հոգիներուն ի հանգիստ



### **ՀՈԳԵՅԱԼԳՍԵԱՆ ԱՂՈԹՔ**

Քրիստոս որդի Աստուծոյ անոխակալ եւ բարեգութ,  
գթա քո արարչական սիրովդ

ի հոգիս հանգուցեալ ծառայից քոց:

Յիշեալ յաւուր մեծի գալստեան արքայութեան քոյ:

Արա արժանի ողորմութեան քաւութեան

եւ թողութեան մեղաց:

Դասաւորեալ պայծառացո ընդ սուրբս քո

յաջակողմեան դասուն:

Չի դու ես Տէր եւ արարիչ ամենեցուն.

դատաւոր կենդանեաց եւ մեռելոց:

Եւ քեզ վայելէ փառք իշխանութիւն եւ պատիւ.

Այժմ եւ միշտ եւ յաւիտեանց յաւիտենից, ամեն:

# ՆՈՒՐԱՏՈՒՌՈՒԹՅՈՒՆ ԵՎԵՂԵՑԻՈՅ

**DON**  
**À L'ÉGLISE**



**DONATION**  
**FOR THE CHURCH**

## **RENOVATION FUND RAISING CAMPAIGNE:**

**FOR THE MONTH OF: - JANUARY 2020**

### **Church Exterior Walls Fundraising Renovation**

#### **New Donators:**

Mr. & Mrs. Alex Kunterian \$5000

Mrs. Maro Markarian \$2000

Mrs. Alis Afker \$300

#### **MONTHLY DONORS:**

Mr. & Mrs. Aret Tasciyan \$100

Mr. & Mrs. Robert Kechayan \$100

Mr. & Mrs. Meguerditch Kanondjian \$100

Mrs. Hélène Labrecque \$50.

**Grand Total: \$213,447.33**

#### **CHURCH:**

Canadian Centre for Ecumenism \$300.

#### **HOME BLESSING:**

Mrs. Tamar Sarkis \$100.

#### **IN LIEU OF FLOWERS DONATIONS MADE:**

##### **THE LATE ANTRANIK TCHADERJIAN:**

Mr. & Mrs. Jeff & Ani Tchaderjian \$200, Mr. Levon Keoprulian, Mrs. Lucy Hamboyan, Mrs. Astrid Reid, Mrs. Marian Madjarian, Mrs. Verkin Gochian \$100, Mrs. Vivian Deuveletian-Ibishian, Mrs. Caroline Turek, Mr. Berc Meneyan \$50,

Mr. Vazken Kaloustian, Me Hrair Djihanian,

Mr. Sarkis Sekeryan \$40, Mrs. Alice Baltadjian \$30.

##### **HOKEHANKISD:**

###### **THE LATE SOUREN TACHDJIAN :**

Mr. & Mrs. Jean-Philippe & Aline Tachdjian \$100.

###### **THE LATE AGHAVNI KASPARYAN:**

Mr. & Mrs. Asot Kasparyan \$100.

###### **THE LATE ANOUSH BOGHOSSIAN:**

Mr. Puzant Boghossian \$100.

###### **THE LATE SIRARPI SIVADJIBASHIAN:**

Mr. & Mrs. Artin Sivadjibashian \$50.

##### **YOUGHAKIN TZNOUNT (CHRISTMAS):**

Dr. Dora Sakayan, Mrs. Irma Asiciyan, Mrs. Maro Markarian \$100, Mrs. Hilda Kepekci \$75, Mr. Jirair Devletian \$50, Mr. & Mrs. Avedis & Mari Basmadjian

\$40.

Ս. Գրիգոր Լուսաւորիչ Առաջնորդանիստ Մայր  
Եկեղեցի  
St. Gregory the Illuminator Armenian Cathedral



ՍՈՒՐԲ ԳԻՐՔԻ ՍԵՐՏՈՂՈՒԹԻՒՆ  
ԵՒ  
ՀՈԳԵՒՈՐ ԶՐՈՅՑ



Հոգեւոր Զրոյցները  
կը վերսկսին

Հինգշաբթի, 30 Յունուար 2020  
երեկոյեան ժամը 7:00-ին, Եկեղեցւոյ մէջ:

**ՍՈՒՐԻ ԵՆ ԹԵՅԻ ԻԿՐԱՍԻՐՈՒԹԻՒՆ**

ÉTUDES BIBLIQUES  
ET  
CAUSERIES SPIRITUELLES

Nous avisons à nos fidèles  
nous recommencerons notre  
études

Bibliques et Causeries Spirituelles  
Jeudi, 30 janvier 2020 à 19h00 dans  
l'église.

**Une collation de café et de thé est servie**

615 Stuart Avenue, Outremont, QC H2V 3H2 / Tel.: (514) 279-3066/ Fax:  
(514)279-8008/ [stgregorychurch@gmail.com](mailto:stgregorychurch@gmail.com)  
Facebook: Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal



**ՀԱՅՑ. ԱՌԱՔ. ՍԲ. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱԻՈՐԻՉ  
ST. GREGORY THE ILLUMINATOR ARMENIAN  
ԿԻՐԱԿԱՍՏԻՑ ԺԱՄԵՐԳՈՒԹԻՒՆ**



Մի րով կը յայտնենք, թէ  
Շաբաթ, 25 Յունուար 2020-ի  
երեկոյեան ժամը՝ 5-ին, երեկոյեան  
(Կիրակամտից) ժամերգութիւն պիտի  
կատարուի Մոնթրէալի Սբ. Գրիգոր  
Լուսաւորիչ Առաջնորդանիստ Մայր Եկեղեցւոյ  
մէջ:

Այսու կը հրաւիրենք մեր հաւատացեալները  
ներկայ գտնուելու հոգեպարար այս  
արարողութեան:

***Օրհնութեամբ՝  
Տ. Դաւիթ Քինյ. Մարգարեան***



# Ս. Գրիգոր Լուսավորիչ Առաջնորդանիստ Մայր Տաճար

## ՏԵԱՌՆԴԱՌԱՉ

Տօն Քրիստոսի քառասնօրեայ Տաճար գալստեան

## ՆԱԽԱՏՕՆԱԿ

Հանդիսաւոր ժամերգութիւն եւ  
Նախատօնակ

Նորապսակներու  
եւ Նոր Նշանուածներու  
Օրհնութիւն

Հինգշաբթի՝ 13 Փետրուար 2020  
Երեկոյեան ժամը 7-ին:



Յաւարտ արարողութեան  
հիւրասիրութիւն  
«Վաչէ Յովսէփեան» սրահին մէջ:

Սիրով կը հրաւիրենք  
հաւատացեալ մեր ժողովուրդը

եւ մասնաւորաբար  
Նորապսակներն ու Նոր  
Նշանուածները

Հաղորդակից դառնալու օրուայ խորհուրդին եւ օրհնութիւն ստանալու:

615 Stuart Ave., Outremont, QC H2V 3H2

Tel.: (514) 279-3066 / Fax: (514) 279-8008

[stgregorychurch@gmail.com](mailto:stgregorychurch@gmail.com)





**Ս. Գրիգոր Լուսավորիչ  
Առաջնորդանիստ Մայր Տաճար  
ՏՕՆ ՍՐԲՈՑ ՎԱՐԴԱՆԱՆՑ ՉՕՐՎՎԱՐԱՅՆ**

*Սկառուներու Օրհնութեան Օր*



**Հանդիսաւոր Ս. Պատարագ  
Եւ Տօնակատարութիւն**

Նախագահութեամբ՝ Թեմիս Բարեջան Առաջնորդ  
**Գերշ. Տ. Աբգար Եպս. Յովակիմեանի**

Պատարագիչ՝ Հոգեւոր Հովիւ  
**Արժ. Տ. Դաւիթ Քինյ. Մարգարեան**

**Հինգշաբթի, 20 Փետրուար 2020, երեկոյեան ժամը 6:30-ին:**

Յաւարտ Ս. Պատարագի գեղարուեստական յայտագիր եւ  
հիւրասիրութիւն «Մարի Մանուկեան» սրահին մէջ:

Սիրով կը հրաւիրենք հաւատացեալ ժողովուրդը միասնաբար  
նոգեկոչելու Սրբոց Վարդանանց Նահատակներու յիշատակն ու աւանդոյթը:

615 Stuart Ave., Outremont, QC H2V 3H2

Tel.: (514) 279-3066 / Fax: (514) 279-8008

[stgregorychurch@gmail.com](mailto:stgregorychurch@gmail.com)





Յարգելի՛ ծնողներ, կը տեղեկացնենք, որ սոյն տարուայ սկսած Սեպտեմբեր ամիսէն նոր որակով եւ ընդլայնուած ծրագիրով կը վերամեկնարկէ Մոնթրէալի Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ Առաջնորդանիստ Մայր Տաճարի կիրակնօրեայ վարժարանը իր 2019-2020 ուսումնական տարին:

Կիրակնօրեայ վարժարանը նոր ուսումնական տարեշրջանին կ'առաջարկէ հետեւեալ դասընթացքները.

1. Հայոց պատմութիւն եւ հոգեւոր գիտելիքներ \_\_\_\_\_
2. Մանկապատանեկան երգչախումբ
3. Շախմատ (ճատրակ)
4. Նկարչութիւն
5. Հայոց լեզու
6. Խօսքի մշակոյթ (թատրոն, ասմունք):
7. Դաշնակի Դասընթացք – (Մանրամասնութեան համար հեռաձայնել \_\_\_\_\_ Վարժարանի պատասխանատուներուն՝ Հայկին եւ Ալինային):

Կը խնդրենք ընդունիլ առ ի գիտութիւն, որ կատարուած են որոշակի փոփոխութիւններ Կիրակնօրեայ Վարժարանի դասընթացքներու կազմակերպման ընթացքին մէջ.

- դասընթացքները պիտի սկսին ժամը 10:30-ին եւ կ'աւարտին՝ ժամը 14:00-ին, որոնց ընթացքին տեղի կ'ունենայ հիւրասիրութիւն:
- դասընթացքներու համար կ'ակնկալուի ձեր խորհրդանշական մասնակցութիւնը՝ 1 փոքրիկի պարագային ամիսը \$15, երկուքի պարագային՝ \$25, իսկ երեքի պարագային՝ \$33:

Միաժամանակ կը տեղեկացնենք, որ ներկայիս կը քննարկուի նաև փոխադրամիջոցի ապահովման հարցը (լրացուցիչ վճարման դիմաց):

Ձեր բոլոր առաջարկները կրնաք ներկայացնել Կիրակնօրեայ Վարժարանի պատասխանատուներուն անձամբ կամ հետեւեալ Ե-հասցէներով (e-mail)՝

[haykpetrosyan80@gmail.com](mailto:haykpetrosyan80@gmail.com) կամ [alinabezhanyan1@yahoo.com](mailto:alinabezhanyan1@yahoo.com):

**Փոքրերու արձանագրութեան համար հեռաձայնել՝**

**Ալինա (438) 889-8167 Հայկ (514) 619-7098**



615 Stuart Avenue, Outremont, QC H2V 3H2 / Tel.: (514) 279-3066 / Fax: (514)279-8008/  
[stgregorychurch@gmail.com](mailto:stgregorychurch@gmail.com)  
 Facebook: Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal



ՀԱՅՑ. ԱՌԱՔ.Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՆՈՐԻՉ

ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍՏ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻ

CATHÉDRALE ARMÉNIENNE ST-GRÉGOIRE L'ILLUMINEUR

ST. GREGORY THE ILLUMINATOR ARMENIAN CATHEDRAL

615 Stuart Ave., Outremont, QC H2V 3H2 / Tel: (514) 279-3066 / Fax: (514) 279-8008 / stgregorychurch@gmail.com

### ԻՆՔՆԱՇԱՐԺԵՐՈՒ ԿԱՅԱՆԱՏԵՂԻ

Միրելի հաւատացեալներ,  
հաճոյրով կը տեղեկացնենք, թէ յետայսու, ամէն Կիրակի,  
ձեր ինքնաշարժերը կրնաք կանգնեցնել  
Bernard փողոցին վրայ գտնուող  
«Centre d'Éducation des Adultes Outremont» դպրոցի  
կայանատեղիին (parking) մէջ,  
սկսեալ առաւօտեան ժամը 10-էն մինչեւ կ.է. ժամը 3:



### PARKING

Dear parishioners, we would like to inform you that every Sunday you will be able to park your cars at the parking of the school Centre d'Éducation des Adultes Outremont on Bernard Street, from 10:00 am – 3:00 pm

- From our Church turn right on Bernard street, go 1 block.
- Turn left on Dollard Blvd. all the way to the 'Centre d'Éducation des Adultes Outremont. The parking space is on your right

**Adress** : 500 Boulevard Dollard, Outremont, QC H2V 3G2